«Անալիտիկ» ՓԲԸ 2017թ. բաժնետիրոջ տարեկան ընդհանուր ժողովի

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընկերության 2017թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:
2. Ընկերության վերստուգողի (աուդիտի) եզրակացության ներկայացում:
3. Ընկերության 2017թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
4. Ընկերության 2017թ. տարեկան շահույթի (վնասի) հաշվի հաստատում:
5. Ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման չափի հաստատում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Անալիտիկ» ՓԲԸ 2017թ. տարեկան
ընդհանուր ժողովի (Բաժնետիրոջ) որոշման

ք. Երևան **08.06.2018թ.**

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Ա.Գրիգորյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար՝ ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնող 100% ձայնի իրավունքով
Ա.Կիրակոսյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար
Բ. Գյուլումյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Հ.Բուրմանյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
Լ.Փաշայան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության դատաիրավական բաժնի գլխավոր մասնագետ
Կ.Թորոսյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ
Ս.Սարգսյան	«Անալիտիկ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Ժողովի նախագահ՝ Ա.Գրիգորյան
Քարտուղար՝ Հ.Բուրմանյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. «Անալիտիկ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) 2017թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:
2. Ընկերության վերստուգողի (աուդիտի) եզրակացության ներկայացում:
3. Ընկերության 2017թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
4. Ընկերության 2017թ. տարեկան շահույթի հաշվի հաստատում:
5. Ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման չափի հաստատում:

ՀԱՐՑ 1

Լսվեց Ընկերության 2017թ. ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը (կցվում է):

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՀԱՐՑ 2

Լսվեց Ընկերության վերստուգողի (աուդիտի) եզրակացությունը (կցվում է):

Ներկայացնող-Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ի գիտություն ընդունելով վերստուգողի (աուդիտի) եզրակացությունը, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հաստատել «Անալիտիկ» ՓԲ ընկերության 2017թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը:

ՀԱՐՑ 3

Լսվեց ընկերության 2017թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատման հարցը (կցվում է):

Զեկուցող- Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հիմք ընդունելով Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ գլխավոր տնօրենի հաշվետվությունը և վերստուգողի (աուդիտի) եզրակացությունը, հաստատել ընկերության 2017թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը:

ՀԱՐՑ 4

Լսվեց ընկերության 2017թ. շահույթի հաշվի հաստատման հարցը (տեղեկանքը կցվում է):

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հաստատել Ընկերության 2017թ. տարեկան զուտ շահույթը՝ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո 9353.0 հազ. դրամ և զուտ շահույթը՝ հաշվի առած ավելացումները (շահութաբաժնի հաշվարկի 060 տող) 9923.0 հազ. դրամ:

ՀԱՐՑ 5

Լսվեցին Ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժնի վճարման չափի հաստատման հարցերը (առաջարկությունը կցվում է):

Զեկուցող- Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հաստատել Ընկերության 2017թ. տարեկան զուտ շահույթի բաշխումը հետևյալ համամասնությամբ.

ՀՀ կառավարության 03.03.2011թ. թիվ 202-Ն որոշման համաձայն, զուտ շահույթի (հաշվի առած ավելացումները) 50 %-ը՝ 4961,5 հազ. դրամը փոխանցել պետբյուջե, որպես պետական մասնակության դիմաց շահութաբաժին.

զուտ շահույթի 5 %-ը՝ 468.0 հազ. դրամն ուղղել Ընկերության պահուստային հիմնադրամ.

մնացած՝ 3923,5 դրամը դրամը (9353-4961,5-468) թողնել որպես չբաշխված շահույթ:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Հ.ԲՈՒՐՄԱՆՅԱՆ**